A. Stern, Ueber die Monatsnamen einiger alten Voelker 1836) :

Սակայն, այս բացատրութիւնը մի թերութիւն ունի :

Արա Աւեստայում հասարակ անուն է անհատի, եւ չի յիշւում իբր համանիշ Արամեան : Իսկ եթէ լոկ ժողովրդական ձեւ է, ինչպէս հասկանալ ,որ նա այնպիսի պատուաւոր տեղ է գրաւել հայ միջավայրում. մինչդեռ անհետ կորել Իրանում :

Միւս կողմից՝ մոռանալու չէ բնաւ, որ Արայի կից կայ էրը, որը թելադրում է ընդունել, որ իլօք հայերի մօտ գոյութիւն է ունեցել մի անուն անկախ իրանական Արայից : Մեզ թւում է, որ Արա ոչ այլ ինչ է, եթէ ոչ զուտ հայ էր իրանական ստուերով սքօղուած : Էրը այն աստուածն էր կամ դիւցազն, որ հայերը բերել էին իրենց հետ արեւմուտքից :

Իրանական մթնոլորտում, շնորհիւ հնչական եւ դաղափարական մերձաւորութեան, էրը տեղի է տալիս Արա ձեւին :

Իսկ թէ ինչ էր նախնական էրը, այդ պարզելու համար պէտք է Պամփիւլիայի վրայից գնանք յետ դէպի Թրակիա :

VII

Հելլէն բաղմաստուած Պանթէոնում մի անուն կայ, որ նմանութիւն ունի հայ էրին, այդ Արէսն է :

Դիցաբանութեան հմուտներին տարօրինակ պիտի թուայ երկու անունների մէջ աղերս որոնելու փորձը : Պատերազմի դոռ աստուածն այնքա՞ն հեռու է երազուն էրից :

Սակայն, Արէսի յունական նկարագիրը նախնական չէ : Նրա սկզբնական էութիւնն ու ծագումը տակաւին վիճելի է : Կարծողներ կան, որ ստորերկրեայ աստուածութեան դաղափարն է, որ բնորոշում է Արէսի հնագոյն տիպը : Երկրի խորքերից նա կեանք եւ բարեբարութիւն է դեղում, կամ մահ եւ աւերածութիւն է սփռում : Վերջին յատկութիւնից զարգանում է պատերազմի եւ սրածութեան ոգին : Նոյն ուղիով, ինչպէս Իշտար դառնում է պատերազմի աստուծու Ասսուրի կինը, այնպէս էլ Արէսն արժանանում է դեղանի Ափրոդիտէի սիրոյն : Ուրիշ խօսքով նա մօտենում է Ադոնիսեան տիպարին :

Վկայ է եւ առասպելը, որի համաձայն Արէսը վարազի կերպարանքով սպանում է իր ախոյեանին, դժբախտ Ադոնիսին կամ ինչպէս յոյն-ասորական հիւսուածն է ասում, սպանում է Թամուզին դեղեցիկ Բելտիսի սիրոյն համար :

Արէսը համարւում է նաեւ հայր Ատիսի :

Այս կարեւոր տեղեկութիւնը յայտնում է Տոմաշէկ, (Die alten Thraker II էջ 59) բայց նրա կոչումը Պրսէլի Tetr. II 97 չի արդարանում. երեւում է, ուրիշ տեղից է քաղած : Ադոնիսին սպանելով եւ Ատիսի հայր ձեւանալով Արէսը երեւան է գալիս իբրեւ նրանց վաղեմի ժառանգորդ ոչ որդիական, այլ հայրական իրաւունքով :

Այս դիցաբանական դծերը վերապրումներ են հնագոյն դրութեան, երբ մարտագոչ աստուածը յայտնի էր աւելի մեղմ բարքով, Ատիս-Ադոնիսեան պատկերով, թեւակից ունենալով Ափրոդիտէ-Կիբելէ կանացի էութիւնը :

Արէսը բնիկ Թրակացի է : Հոմերոսը նրա բնակավայրը համարում է Թրակիան : Այստեղից է նա յարձակւում Թեսսալիա եւ Բէոտիա, այստեղ է ապաւինում Ափրոդիտէի հետ ունեցած յայտնի սիրային արկածից յետոյ : Ցաճախ երեւան է գալիս զինուած Թրակացու նման եւ մարմինը վիտած : Եւ վերջապէս Թրակիան կոչւում է նրա անունով Արէա :

Վիճելին այսպիսով Արէսի հայրենիքը չէ, այլ նրա անուան ծագումը : Արդեօք անունը նմանապէս Թրակիակա՞ն է :

Ցունական Պանթէոնը հարուստ է այլազան բնակիչներով : Նրանց մի մասը աւանդ է նախահելլէն բնակչութիւնից : Ցունական են համարուելու այն անունները, որոնք մեկնելի են նոյն լեզուի բառամթերքով : Լեզուագէտները տրամադիր են Արէսը հանել յոյն արէ, բռնութիւն, վնաս, սանկ. arus «վէրք» բառից (Boisacg, Dictionnaire, էջ 76) :

Այս ստուգաբանութիւնը, որի հիմը պատերազմի աստուծու աւերիչ ոգին է, պայմանական է եւ եթէ պարզուի, որ Արէսը սկզբնապէս պատերազմի աստուած չէ, պիտի կորցնէ իր արժէքը :

Արդ՝ Արէսի մասին շատ տարբեր կարծիքներ կան : Ոմանք համարում են նրան ամպրոպային աստուած (Vreller, Gr. Mith. I 226)